«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ՀԵՂԻՆԱԿ՝ Նարինե Արշակի Ղուլյան

ԽՈՒՄԲ /ԱՌԱՐԿԱ/՝ 6-րդ , Հայոց լեզու և գրականություն

ՂԵԿԱՎԱՐ՝ Արմինե Ալբերտի Ղազարյան

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն.....3

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց լեզու և Գրականություն առարկայի դասավանդման ընթացքում……..……..…4

Եզրակացություն.....11

Օգտագործված գրականության ցանկ……13

Ներածություն

Աշակերտին կրթելիս և ընդհանրապես կրթության մասին խոսելիս մենք շատ ենք կարևորում արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ:

Իսկ ինչ է արժեքը կամ արժեքային համակարգը:Եվ որն է ուսուցչի դերը այդ համակարգի ձևավորման մեջ:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժության մեջ ըմբռնվում է բավականին լայն շառավիղով: Արժեհամակարգի մեջ համախմբված են մարդու բարոյական , գեղագիտական , հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքները:Իսկ այս համակարգը անհրաժեշտ է անձի՝ մեր դեպքում աշակերտի բազմակողմանի զարգացման համար: Արժեհամակարգի ձևավորման և նրա կայունության համար հանրակրթական բնագավառում անփոխարինելի նշանակութուն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ մեծ է հումանիտար առարկաների դերը:Մասնավորապես անգնահատելի է Հայոց լեզվի և գրականության դերը այս հարցում:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորցը, ինչը ուսուցչի շնորհիվ, նրա ճիշտ մոտեցմամբ յուրացնում է աշակերտը, իսկ դա նրա մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմություն, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում ,և դրանք հետագայում աշակերտների մոտ վերածվում են համոզմունքերի կարողությունների:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունը, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ տարիքային առանձնահատկությունների: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այն):

Բնական է, որ այդ հեղինակավոր մարդիկ կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն:

Երբեմն աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այնպես նաև բացասական:

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

- մարդասիրությունը, աշակերտի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,
- իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,
- գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական արանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդների հարստությունն ու բազմազանությունը,
- մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը, · մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,
- ուսուցչի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը:

Մանկավարժի վարքը ուսուցչի անհատական մանկավարժական մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա ձևավորվում է ուսուցչի մանկավարժական վարպետությունը:

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները: Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նոր

մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար: Օրվա հրամայականն են դառնում ուսուցման նոր մեթոդների որոնման, կրթության բովանդակության նորացմանը միտված աշխատանքները: Անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրում, արագորեն վերակազմավորվող աշխատաշուկայում ավելի ու ավելի է կարևորվում որակյալ ուսուցման և որակյալ մասնագետների պահանջը, ինչը բնականորեն նպաստում է հանրակրթության դերի բարձրացմանը: Կրթությունը դառնում է հասարակության զարգացման խթանիչ ուժ՝ միաժամանակ ապահովելով նաև մարդկային համակեցության ներդաշնակ պայմաններ հասարակության բոլոր շերտերի համար: Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական-ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական քաղաքականությունը: Բայց նախ և առաջ ուսուցիչն ինքը պետք է լինի այդպիսին:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները:

Սովորողներ մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց լեզու և գրականություն առարկայի դասավանդման ընթացքում

Հաշվի առնելով թեմայի արդիականությունը ՝ դիտարկենք ուսումնական գործընթացում ունեցած փորձերը՝ հասկանալու համար որքանով են դասավանդվող առակաները ազդում աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա:

Հետազոտության նպատակը – Յուրաքանչյուր դասի ժամանակ մեր առջև դրված է խնդիր՝ ուշադրություն դարձնել դասի դաստիարակչական մասին, այդպիսի խնդիրների լուծմանը՝ հաշվի առնելով առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ պետք է դարձնի աշակերների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Հետազոտության խնդիրները.

1. Ելնելով առկա իրավիճակից՝ գալիս ենք այն եզրահանգման,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժներ ուշադրության կենտրոնում:
2. Ներկայացվող նյութը արդունավետ օգտագործել՝ աշակերտի մեջ ձևավորելով արժեհամակարգին բնորոշ հատկանիշները:
3. Առարկայի դասավանդման ընթացքում արժեհամակարգի ձևավորման համար մանկավարժից պահանջվում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք աշակետի, հատկապես դեռահասի անձի նկատմամբ:
4. Դասի ընթացքում առաջարկվող նյութը իր բարոյախոսական և դաստիարակչական մասով նպաստում է աշակերտի ինքնակազմակերպման, որոշ ընդունակությունների,առանձնահատկությունների դրսևորմանը:
5. Առարկայի շրջանակներում դասավանդվող նյութի մեջ գտնել կապը աշակերտի առօրյայի հետ, ինչը կարող է մեծ աղդեցություն ունենալ բարդ թեմաների ընկալման գործում , առաջացած խնդիրների հարթելը հենց աշակերտի ունեցած կենսափորձը հաշվի առնելով:
6. Թեմայի գերխնդիրներից է նաև օգտագործել ճիշտ ընտրված ուսումնական մեթոդներ ՝ դասի դաստիարակչական մասը ապահովելու համար:
7. Արժեհամակարգի ձևավորման մեջ խնդիր է նև դասարանի ընդհանուր

վիճակը, որակը, աշակերտներ անհատական խնդիրները, միջանձնային խնդիրները, սոցիալական խնդիրները և միջանձնային հարաբերությունները, աշակերտի անհատականությունը:

Հետազոտության մեթոդներն են- խմբային աշխատանքը, դասախոսությունը, փոքր ձնագունդ, հարց և պատասխան, 2 բան որ կփոխեի այս թեմայի մեջ և այլն:

Բարոյական արժեհամակարգի ձևավորումը մայրենի առարկայի ընթացքում:

Դասավանդվող նյութը ի զորու է դառնալ աշակերտների համար ճշմարտությունը բացահայտելու, իրականությանը այլ տեսանկունից նայելու, նորովի տեսնելու միջոց: Դիտարկենք մայրենիից հեքիաթների բաժինը:

Պատահական չէ, որ հենց հինգերորդ դասարանի աշակերտն է մի ամբողջ բաժնում ուսումնասիրում հեքիաթներ:

Այստեղ հրաշքների, իրապատումների շնորհիվ վեր են բարձրանում բարոյական, բարոյա խրատական խնդիրները:

Հեքիաթին բնորոշ բարությամբ, մի տեսակ խաղաղությամբ մանկավարժը վեր է հանում հիմնական գաղափարը:Աշակերտը սկսում է տարբերել լավը վատից, չարը բարուց: Հեքիաթներում խոսվում է մարդկային արատների մասին, հերսներն ու դեպքերը պատկերված են չափազանցված կամ այլաբանորեն :Այստեղ արտահայտված են մարդկային նվիրական երազանքներն ու զգտումները:Այն, ինչ կյանքում անհնար է եղել իրականացնել, մարդիկ ցանկացել են իրականացած տեսնել հեքիաթում:

Դիտարկենք Սերգեյ Վարդանյանի «Թռիչք» հեքիաթը :

Դասը կարելի է սկսել մտագրոհ մեթոդով:Ի՞նչն ենք կարևորում կյանքում, ինչո՞վ եմ ես մյուսներից տարբերվում, ի՞նչ է ձգտումը և այլն:

Սա հնարավորություն է տալիս աշակերտին ինքնուրույն մտածել, այնուհետև՝ ընթերցումից հետո, աշակերտը գտնում է կապը իր տված պատասխանների և հեքիաթի գաղափարի միջև: Սա հնարավորություն է տալիս նաև խորը և ճկուն գիտելիքներ ձեռք բերել, այն նաև նպաստում է ճանաչողական մտածողության զարգացմանը:

Այս հեքիաթի գաղափարը վեր հանելիս աշակերտը վերլուծում է և թրթուրի, և թիթեռների կերպարները:փորձում ենք թեման արդիականացնել, որ կերպարում է իրեն տեսնում աշակերտը կամ տեսել է երբևէ հերոսների նման մարդկանց և ում

կուզեին իրենք նմանվել: Թեման կարևոր է հինգերորդ դասարանում սովորող աշակերտի համար. տարրական դասարանում դրված է արժեհամակարգի ձևավորման հիմնաքարը.սովորողը գիտի՝ հեքիաթը, առակը այլաբանորեն խրատում են մեզ, սովորեցնում տարբերել մարդկային արատներն ու առավելությունները:

Հետազոտենք նաև Հովհաննես Շիրազի «Մարգարիտն ու փրփուրը» առակը : Շատ նուրբ, գեղեցիկ համադրումներով հեղինակը առակի գաղափարը տեղ է հասցնում և մենք դասի վերջում `ամփոփման փուլում կիրառում ենք Տ-աձև աղյուսակը.

Մարդկային արատներ -Մարդկային բարձր հատկանիշներ

- Մեծամտություն —- Առաքինություն
- Փառասիրություն— Հեզություն
- Եսասիրություն— Խոնարհություն
- Գոռոզություն —Խորագիտություն
- Դատարկամտություն— Համեստությումն

Այս բառերի օգտագործումը նպաստում է նաև լեզվի իմացությանը. Աշակերտը սովորում է հականիշ բառեր, ընկալում է դրանց իմաստը և դրանից հետո ճիշտ կիրառում է և՛ բանավոր, և ՛գրավոր խոսքում:

Ստեղծագործականություն: Գեղագիտական արժեքները դասի ընթացքում Հետազոտենք վեցերորդ դասարանում ուսումնասիրվող մի թեմա:

Օրինակ՝«Ազնավուրը Ազնավուրի մասին» դասը ինքնակենսագրական ստեղծագործությունների շարքից: Կսկսենք դասը ազնավուրյան երգերով, և այստեղ մտագրոհի միջոցով կհնչեն հետևյալ հարցերը.

Ի՞նչ զգացինք, ի՞նչ կատարվեց մեզ հետ, արդյոք լսել եք երբևէ Ազնավուր, հաճելի՞ էր լսել այս հեղինակին, էլ որտեղ էինք լսել այս անունը(այստեղ տեղին է հիշել 1988 թվականի երկրաշարժը և Ազնավուրի անձնազոհ և նվիրական վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ): Այստեղ կարևոր է նաև միջառարկայական կապի դերը. արվեստին մոտ աշակերտներն էլ ավելի հետաքրքրությամբ կլսեն:Տեղեկությունների տարափը հնարավորություն կտա էլ ավելի շատ բան իմանալ հեղինակից: Այս ստեղծագործության մեջ հիմնավորվում է

ընտանիքի գաղափարը: Բնութագրում են գլխավոր հերոսներին՝ վերլուծելով նրանց արարքները և դրդապատճառները, ներկայացնում է աշակերտը նաև հերոսների վերաբերմունքը շրջապատի նկատմամբ:Այսպիսով գլխավոր գաղափարը՝ պայքարող մարդ, արվեստի բարդ ճանապարհ, ուժեղ կամքի ուժ, քույր-եղբայր ջերմ հարաբերություններ:

Հայրենասիրության թեման՝ որպես արժեհամակարգի անփոխարինելի մաս. Հայրենասիրությունը անգնահատելի դեր ունի աշակերտի դաստիարակչական արժեքների ձևավորման մեջ:Այս թեմաները դարձել են շատ արդիական և նույնիսկ՝ շատ խոցելի: Դիտարկենք մի երևույթ. դասարանում սովորում է աշակերտ, ում եղբայրը կամ հարազատը զոհվել է:Այստեղ անհրաժեշտ է դրսևորել նրբանկատություն և օգտագործել մանկավարժական նուրբ հոգեբանություն՝ հաշվի առնելով հոգեվիճակը: Հնարավոր է, այսօր արժեքները փոխվել են. մոտեցումները այլ են:Միգուցե այդպիսի աշակերտը ըմբոստանա, արտահայտի այլ կարծիքներ, անհամաձայնություն դրսևորի, ինչը շատ բնական է:

Հետազոտենք ութերորդ դասարանում սովորող աշակերտներին Ռաֆֆու «Խենթը» անցնելիս: Այստեղ տեղին է օգտագործել արտադասարանական ընթերցանության դասաժամերը՝ կարևոր հատվածները ընթերցելու համար: Ստացված դաս ունենալու համար կարելի է առաջին դասն անցկացնել Վաղարշապատում էքսկուրսիայի միջոցով՝ մոտիվացիա առաջացնելու համար:

Աշակերտները կլինեն «Խենթ»-ի հերոսի գերեզմանի մոտ (մենք գիտենք, որ հերոսի նախատիպը եղել է): Աշակերտի մոտ հետաքրքրությունը էլ ավելի կմեծանա, սկիզբը կլինի խոստումնալից:

Թեման շատ արդիական է. Վարդանը՝ վեպի գլխավոր հերոսը, երազում էր նոր Հայաստանի մասին իր գաղափարակիցների հետ:

«Հայոց ժողովուրդը մի զարմանալի ժողովուրդ է. Նրան սպանելը, եթե չասեմ անհնարին է, կարող եմ ասել, որ շատ դժվարին է:Նա այն բազմագլխյան առասպելական վիշապն է, որ կոչվում է Հիդրա, որի յուրաքանչյուր ջախջախված և կտրված գլխի տեղ բուսնում է մի նորը և ավելի զորավոր է»

Ռաֆֆի Այսպիսի խոսքերը կարող են հայրենաճանաչողական դաստիարակչության խթան լինել ուսուցման ընթացքում: Ուսուցչի վարած դասերի ընթացքում հայրենասիրության թեման մեծ հետաքրքրություն պիտի առաջացնի աշակերտների շրջանում, մանավանդ, ինչպես նշեցի իմ նախորդ խոսքում, այն շատ

արդիական է: Այսպիսի խոսքերը, ինչպիսին Ռաֆֆու խոսքերն են, կարող են օգնել ուսուցչին:Մեր նպատակն է հավատարիմ մնալ մեր արժեհամակարգին : Այսօր հստակորեն կան որոշ գաղափարներ և գործողություններ, որոնք ուղղված են հայ ազգային արժեհամակարգի՝ ավանդույթների, մշակույթների, լեզվի, պատմության, հավատքի, պետության ու բանակի դեմ:

Դեռահասների շրջանում, հատկապես տղաների, նկատվում է գաղափարական նոր փոփոխություններ, նոր մտածելակերպ, նոր մոտեցումներ: Այդ պատճառով ուսուցչի դերը աշակերտի կյանքում շատ ավելի մեծ է ու կարևոր: Այնուամենայնիվ, աշակերտը վստահում է ուսուցչին ու կարևորում նրա խոսքը: Այսօր շատերը հայրենասիրություն արժեքի դիմաց մեծ գին են վճարել. նրանց մեջ այդ դաստիարակությունը սերմանել է նաև ուսուցիչը. արժեհամակարգը թերի է առանց այդ կարևոր հատկանիշի: Հայ գրականությունը հարուստ է այնպիսի հեղինակներով, որոնց ստեղծագործությունները տարիներ շարունակ կրթության մեջ օգնող, աջակցող դեր են ունեցել ապագա սերունդներին դաստիարակելու, կրթելու համար: Այսպիսի թեմաներից հետո կարելի է կիրառել հետևյալ մեթոդը.

Նշել 2 բան, որ հավանեցի, որ ինձ դուր չեկավ, որ նախորդ թեմայից ավելի հավանեցի, որ կփոխեի և այլն:

Այսպիսի թեմաներց հետո այսպիսի մեթոդները հնարավորություն կտան աշակերտին ինքնաարտահայտվելու, սեփական կարծիք հայտնելու, վերլուծելու, համեմատելու և այլն: Երբեմնի անտարբեր աշակերտների մասնակցությունը շատ հաճախ ավելի մեծ է հայրենասիրական թեմաներ շոշափելիս:Փորձը ցույց է տալիս, որ հեշտ է աշխատել աշակերտի հետ, երբ մանկավարժը երևույթը համեմատում է առօրյայում առկա իրականության հետ: Հետաքրքիր է իրականը, ոչ թե արհեստականը: Աշակերտը մեծ ուշադրությամբ հետևում է այն թեմաներին, որոնց հետ նա առնչվում է նաև իր կյանքում:

Ինչպիսի՞ն է հպարտության զգացումը հայրենասիրական թեմաների շրջանակներում:

Սեփական ժողովրդի պատմությունը, գիտական նվաճումներ, բարոյական հաղթանակներ,պատմական և գրական հերոսների վառ կերպարներ, մշակութային արժեքները դարձել են աշակերտի համար ամենաբարձր գաղափարները: Ուսուցիչը մեծ առաքելություն ունի. Ոչ միայն տալ ուսումնական կրթություն այլև դաստիարակել հայրենիքին արժանի զավակ:

Հայոց լեզվի և գրականության ժամերին կազմակերպված միջոցառումները ևս

մեծ ազդեցություն կարող են ունենալ աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա:

Գիտենք՝ տարին չարենցյան է, և գրականության ժամերին ավելի շատ ենք անդրադառնում մեծն բանաստեղծին: Ութերորդ դասարանի աշակերտների հետ կազմակերպվեց ցերեկույթ՝ նվիրված Եղ. Չարենցի 125 ամյակին: Երբեմնի ծույլ աշակերտն անգամ մեծ ոգևորվածությամբ մասնակցեց ցերեկույթին: Աշակերտը հնարավոր է ոչինչ չսովորի դասերի ընթացքում, բայց այսպիսի միջոցառումները խթանում են, և ամեն մեկն իր չափով սովորում է հեղինակից որևէ նյութ:Չնչին մասնակցությունն անգամ արդեն առաջընթաց է: Այստեղ աշակերտների բուռն մասնակցությունը արդեն իսկ նպաստում է արժեհամակարգի ձևավորման գործընթացին:

Մշակութային արժեքների պահպանումը, ինչպես գիտենք, 8 կարողունակություններից մեկը մշակութային կարողունակությունն է: Այսինքն կրթության ընթացքում մեծ ուշադրություն պետք է դարձնել ազգային մշակույթին՝ հարգելով նաև մյուս ազգերի մշակույթը: Վերջին տարիներին արդեն խիստ աճել է հետաքրքրությունը մշակութային արժեքների հանդեպ: Այս գործընթացը մեծապես պայմանավորված է տարբեր ուղղորդում ունեցող տեղեկատվական հոսքերով(հատկապես նոր մեդիան և հեռուստատեսությունը):Նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ տեղեկատվությունը դարձել է խիստ շարժուն, ինչը նույն քան շարժուն է դարձրել մշակութային ներթափանցումները: Այդ ամենը իր հերթին թելադրեց արժեհամակարգի ձևավորման սեփական կանոնները:Դեռահասը,ով չունի կայացած արժեհամակարգ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին. նա հաստատվում է տարեկիցների միջավայրում, ուստի կարևոր է այսօր արդեն նրան ներարկել առողջ արժեքներ, ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր, քաղաքակիրթ քաղաքացի:

Հայաստանյան իրականության մեջ մեծ տարածում ունեն հեռուստասերիալները, որոնք անմիջապես մեծ լսարան նվաճեցին: Դրանից հետո դեռահասների մոտ քննարկման նյութ է դառնում դրանց ազդեցությունը, դրանք հասարակության համար անընդունելի նոր արժեքներ են: Այստեղ ավելի մեծ է դառնում ուսուցչի դերը, քանի որ նա պետք է կարողանա իր գործունեությամբ փոխել աշակերտի մշակութային ճաշակը: Դիտարկենք մի երևույթ:

Մինչ դիտարկումը ասեմ. որ ամեն ժողովրդի էպոս ամենակարևորն է ստեղծող ժողովրդի բանահյուսության գանձարանում Այդպիսին է նաև հայ ժողովրդական

հերոսական էպոս «Սասունցի Դավիթը», որին ծանոթանում են տարբեր դասարաններում: Որպես երկար տարիներ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն դասավանդող ուսուցչուհի՝ հավաստում եմ, որ հայ երեխան սիրով է յուրացնում մեր էպոսի խորունկ գաղափարներն ու հայրենասիրական ոգին Ամեն ինչ կախված է դասավանդող ուսուցչի վարպետությունից Էպոսի ուսուցումը սկսվում է ցածր դասարաններից, և դա տրամաբանական է Մեծ մտածող, մանկավարժ և գրող Լևոն Շանթը, որը երկար տարիներ զբաղվել է մանկավարժական աշխատանքով, ապագա և գործող ուսուցիչներին հղել է բազմաթիվ օգտակար պատգամներ Ահա թե ինչ է ասում նա:

«Հաջորդականության ընտրությունը» հոդվածում. «Ո՛չ մեկ կարողություն, ոչ մեկ ուսում ու գիտություն ձեռք չի բերվիր մեկ անգամեն, մեկ ջանքով, այլ երկար-երկար ճիգերով, քիչ-քիչ, հետզհետե և կտոր-կտոր, և երբեք ո՛չ մեկ կարողություն, ո՛չ մեկ գիտություն վերջ ու գագաթ չունի իր զարգացման. միշտ կարելի է ավելի ու ավելի կատարելագործել. ինչ որ սովորաբար ավարտել, գագաթնակետ կամ կատարելություն կնկատենք՝ հարաբերական արտահայտություններ են միայն»: Էպոսը ամեն հայի պետք է ուղեկցի նրա կյանքի բոլոր տարիքներում, որովհետև էպոսի ասելիքը ամեն մի ժողովրդի հավաքական մտածողության, դարավոր կենսափորձի հիման վրա է առաջացել և ասվել է դարերի համար. այն ուղեցույց է: Այս ճշմարտությունը գիտակցել է հենց էպոսի առաջին գրառողը՝ Գարեգին Սրվանձտյանցը, որի կատարածը հիմք դարձավ հայ էպոսագիտության զարգացման և նրա մշակումներին համար Զարմանալի չէ, որ Գ. Սրվանձտյանցի գրառումից շատ չանցած հայ գրականության մեջ այդ գրառման հիման վրա հանդես եկան էպոսի երկու գրական մշակումներ Առաջինն այն իրականացրեց Սեդրակ Մանդինյանը (1844- 1915), որը մանկավարժ էր, դերասան, գրական ու թատերական գործիչ: Նա երկար տարիներ հայ գրականություն է դասավանդել դպրոցներում և միանգամից կարևորել է էպոսի՝ ազգային ոգին արթուն պահելու հատկանիշը ու իրականացրել նրա մշակումը՝ «Ազգային դյուցազնական աշխարհ» խորագրով:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրն անցնում են IX դասարանում: Սա փաստորեն մեր ազգային էպոսի հետ ծանոթանալու հիմնական յուրացման առաջին ու կարևոր քայլն է, որը ներկայացնում է հայ էպոսագիտության սկզբնավորումը, նրա անցած ճանապարհը, զանազան պատումների գրառումները և դրանց հիման վրա ակադեմիկոս Օրբելու խմբագրությամբ 1939 թվականին

համահավաք բնագրի ստեղծումն ու հրապարակումը: Բնականաբար խոսք է ասվում էպոսի պատմական հիմքի, գաղափարական հարստության, կերպարների համակարգի, բառապաշարիշերտերի ու արվեստի մասին:

Մեր էպոսն իրոք յուրահատուկ է և այն բացառիկ նմուշներից, որի միջոցով կարելի է ձևավորել արժեհամակարգ՝ սկսած տարրական դասարաններից:

Դիտարկենք մի երևույթ. ուսումնասիրում ենք էպոսը, ներկայացնում ենք բովանդակությունը,հանձնարարում ենք ընթերցել, սակայն հետաքրքրությունը շատ ցածր է:

Բայց դրա լուծումը ևս կա. այցելեցինք թատրոն,դիտեցինք «Սասնա Ծռեր» ներկայացումը: Աշակերտների հիացմունքն ու հույզերը խառնվել էին իրար. աշակերտը թատրոնի միջոցով կարծես մեկ քայլով մոտեցավ գրականությանը, նրա մոտ ձևավորվեց նաև գեղագիտական ճաշակ, ձեռք բերեց նոր գիտելիքներ և ինֆորմացիա: Այսպիսով մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ:

Այսպիսի այցերով աշակերտի մոտ առաջանում է սեր և հավատ դեպի առարկան: Էպոսը, առասպելները, ավանդությունները, լեգենդները մեծ ազդեցություն ունեն աշակերտների էթնիկական արժեհամակարգի ձևավորման մեջ:Աշակերտները բարձր գնահատվող արժեքների մասին կարող են կարծիք կազմել հենց առասպելների հիման վրա: Առասպելներում ամենից հաճախ դրսևորվում են հավատն առ այն,, որ գոյություն ունի անմահություն, հավերժական երիտասարդություն, ուժեղը հաղթում է չարին:

Դիտարկենք Հայկ նահապետի և նրա ժառանգների գործունեությունը ինչ ազդեցություն կարող է թողնել աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա: Այն մեզ ցույց է տալիս, որ ազգի կողմից դավանվող հիմնական արժեքները պետք է լինեն անկախությունը, ազատությունը, հպարտությունը, քաջությունը, վեհանձնությունը և ազգասիրությունը, հայրենիքը զենքի ուժով պաշտպանելու և նրա սահմանները ընդլայնելու արիությունը, միմյանց օգնության հասնելու պատրաստակամությունը:

Փաստորեն ներկայացնում է մեր ազգի արժեքային համակարգի կորիզը և հայ էթնոսի առաջին սիմվոլների ստեղծումը:Աշակերտի համար Հայկ նահապետի անձն ու նրա գործերը, նրա հաջողակ հետնորդները սիմվոլացվում են: Փորձը ցույց տվեց, որ տարիներ անց հենց այդ նույն աշակերտները դարձան մեր նախահոր գաղափարների կրողը. չհանձնվելու, պայքարելու անկախ լինելու գիտակցությունը

հայի գենի մեջ է (այս ամենի ապացույցը քառասունչորսօրյա պատերազմում մեր հերոսների դրսևորած քաջությունն ու անվախությունն է):

Այսպիսի դասերի ընթացքում կիրառում ենք **բանալի բառեր** մեթոդը:Օրինակ՝ մշակույթ, ինքնություն, ազգ, արդիականացում, բարոյականացում, ազատություն և այլն:

Էլեկտրոնային մեդիայի ազդեցությունը սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում: Այստեց տեղին է օգտագործել իմացական արժեհամակարգ գաղափարը:Ինչպիսի՞ն է այն մեր առարկաների շրջանակներում:Այստեղ օգնության են գալիս ՏՀՏ գործիքները ժամանակակից կիրառությամբ ինչն էլ իր հերթին թելադրում է արժեհամակարգ ձևավորման սեփական կանոնները: Երբեմն այս ճանապարհին ետին պլան են մղվում ազգային, պետական, մշակութային, քաղաքակրթական արժեքները, ինչը դառնում է հանրության արժեհամակարգի ձևախեղման պատճառ: Աշակերտի մեդիագրագիտությունը պետք է օգտագործել ի նպաստ մեր առարկաների:

Հանձնարարում ենք դասարանին գործնական աշխատանք՝ նոր թեման ուսումնասիրելու համար:Գործնական աշխատանքի թեման է «Հինգերերդ դարի պատմիչներ»: Այստեղ կատարում ենք աշակերտակենտրոն ուսուցում. դասարանը բաժանում ենք երկու խմբի, խմբերը ընտրում են ավագներ, ընտրում են այնպիսի աշակերտների, ովքեր տիրապետում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին:

Հանձնարարությունը հետևյալն է.

1. Տարբեր կայքերից հավաքել տեղեկություն 5-րդ դարի պատմիչների մասին
2. Կազմել սահիկաշար
3. Կատարել օնլայն այց տարբեր թանգարաններ, պատկերասրահներ
4. Ներկայացնել հատվածներ տեսաֆիլմերի տեսքով

Բոլորս գիտենք, որ այսօրվա աշակերտը չի պատկերացնում իր կյանքն առանց հեռախոսի կամ համակարգչի : Հաշվի առնելով դա՝ այդ ամենը կփորձենք կիրառել՝ ի նպաստ մեր ուսուցման: Աշխատանքի ավարտին աշակերտները համակարգչային սենյակում ներկայացրին իրենց պատրաստած նյութերը. ամեն մեկը այստեղ ուներ իր գործառույթը և դերը: Կատարվել էր համախմբված աշխատանք:

Հետազոտենք աշակերտների պահվածքը, նկատվում է.

1. Ինքնավստահություն

2. Ակտիվ մասնակցություն
3. Առողջ մրցակցություն(սկսում են միմյանց փոխանցել նոր գիտելիքներ)
4. Հնարավորություն բացահայտելու աշակերտի ուղղվածությունը(երբեմն այսպիսի խելացի աշակերտները աննկատ են մնում)
5. Իմացական մակարդակի դրսևորում
6. Համագործակցային աշխատանք համադասարանցիների հետ
7. Ներկայանալու հնարավորություն
8. Նոր գիտելիքներ մեդիագրականության շնորհիվ

Վերլուծելով կատարված աշխատանքը՝ պարզ է, որ այս գործնական աշխատանքը ավելի ստացված է, քան նախորդները: Այստեղ սովորողը կարողացավ ինքնադրսևորվել, լինել ներկայանալի, ձեռք բերեց հարգանք և՛ մանկավարժական կոլեկտիվում,և՛դասարանում:

Այսպիսի համագործակցային փոխհարաբերությունների միջոցով ստեղծվում է կապ աշակերտի և ուսուցչի միջև, որը նպաստում է մտավոր և դաստիարակչական խնդիրների հեշտ լուծմանը:Այս ամենը վկայում է այն մասին,որ աշակերտի արժեհամակարգը ձևավորվում է ներդաշնակության սկզբունքով,որում իր ուրույն տեղը պիտի ունենա սերտ հաղորդակցումը ուսումնական մյուս բնագավառների հետ:Մեր առջև դրված է որոշակի խնդիր յուրաքանչյուր դասի ժամանակ: Այս դասի նպատակն էր՝ աշակերտը իմանա հինգերերդ դարի պատմիչներին,ունենա համապատասխան և նվազագույն գիտելիքներ:

Իմացական արժեքները սովորողի մեջ արժեքային համակարգի ձևավորման կարևոր տարրերից է: Այն աշակերտին տալիս է բազմակողմանի գիտելիքներ:Իմացական արժեքների ձևավորման գործընթացում մեծ է նաև հայոց լեզվի դերը.այստեղ աշակերտը հնարավորություն ունի ի ցույց դնել ունեցած գիտելիքները՝ իր ունեցած նախկին գիտելիքների շնորհիվ:

Հոգևոր արժեքների ձևավորումը սովորողի մոտ.

Հոգևոր արժեքների մասին մենք ամենաշատն ենք խոսում մեր դասաժամերին, աշակերտը տարբերում է նյութական արժեքը հոգևոր արժեքից:Դասի արժեքային համակարգի մասին խոսելիս միշտ խոսվում է հոգևոր արժեքների մասին, քանի որ ուսուցչի դերը այստեղ շատ մեծ է: Զգայուն, խաղաղ, մտածողական և մարդկային լավ հատկանիշներով օժտված լինելը վկայում են հոգևոր բարձր արժեքներ

ունենալու մասին: Կրթօջախը սովորողին սովորեցնում է ճշմարտությունը, փոխանցում է հավատ, հույս,աշակերտը դառնում է ներդաշնակ:Ահա այս արժեքներն են սահմանվում հիմնարար հոգևոր արժեքներ: Հոգևոր արժեքները անհրաժեշտ են անընդհատ աճելու, զարգանալու և առաջընթացի համար;

«Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունն է, հաղթանակի բերկրանքն է, ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքիս վերլուծության արդյունքում գալիս եմ մի շարք եզրահանգումների.

Համապատասխան աշխատանքի, փոխադարձ հարգանքի, անսահման սիրո, աշխատասիրության շնորհիվ դպրոցից ճանապարհում ենք ներդաշնակ ու զարգացած անձի, ով տիրապետում է ոչ միայն գիտական գիտելիքների հիմունքներին, այլև ունի աշխարհայաց,կայուն արժեհամակարգ, մտավոր ,բարոյական,հայրենասիրական դաստիարակություն:

Փորձը ցույց է տվել,որ դաստիարակչական մասը ապահովելու համար ամենագեղեցիկ մեթոդը դա դասախոսություն է, գեղեցիկ խոսքը,ազդեցիկ կեցվածքը, օրնակելի վարքը, առաքինությունը:Այս բոլոր հատկանիշներով օժտված մանկավարժը դառնում է սովորողի իդեալը, սովորողը ձգտում է նրան նմանվել, այդպիսի մանկավարժի խոսքը դառնում է սիրելի, ընդունելի ու առաջնորդող:

Այսպիսով գրականության և լեզվի դասերը դառնում են լավագույն միջոցը աշակերտների մեջ լավը, գեղեցիկը, նվիրականը, արժեքավորը,մնայունը սերմանելու համար: Սակայն չպետք է մոռանալ նրբանկատության մասին. երբեմն կարող է մի թեթև վրիպումն անգամ խոցել աշակերտին ,և նա դառնա դյուրագրգիռ ու անհնազանդ:Այսպիսի դեպքերում պետք է հաշվի առնել նաև սովորողի կարծիքը և ցուցաբերել հարգանք նրա կարծիքի հանդեպ: Բոլոր դասաժաներին էլ ուսուցիչը հետապնդում է կարևորագույն նպատակ՝աշակերտը կարողանա վեր հանել ստեղծագործության հիմնական գաղափարը:

Ազգին անհրաժեշտ են արժանի զավակներ:Ես համոզված եմ՝ մեր երեխաները կդառնան այդ զավակները. նրանք այդ դժվարին ուղին անցնում են հոգատար, խելացի,գիտակ,աշխատասեր մանկավարժների հետ :Այսօրվա մանկավարժը գիտակցում է՝ ինչ դժվարին գործ է իրեն բաժին ընկել, և նա գիտակցում է, որ ազգի ֆիզիկական և հոգևոր գոյությունը կախված է նաև իրենից: Արժեքային համակարգը անթերի կձևավորվի այն սովորողի մոտ, ում դասավանդում է բարձր արժեքներով օժտված մանկավարժը, իսկ հակառակի մասին խոսելն անիմաստ է:

Երբ ինձ հարցնեն՝ ո՞րն է ամենաստացված ժամանակակից մեթոդը, ես կասեմ՝ դա անմնացորդ նվիրումն է ու սերը աշխատանքի նկատմամբ:

Պատահական չէ՝ ժամանակին մանկավարժությունը համարվել է փիլիսոփայության մի ճյուղ, և մենք պատասխանատու ենք անձի ձևավորման, դաստիարակության,,կրթության ու ուսուցման համար:

Օգտագործված գրականություն

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցն Գ. Ա., Աշակերտների դաստիարակությունը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112էջ:
2. Հատված «Խենթ»-ը վեպից
3. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակության կոլեկտիվում, Երևան,1986թ., 86էջ
4. Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1, стр. 87